

ՇՆՈՐՀԱՆԴԷՍ ՆԱԹԵԼԼԱ ԼԱԼԱԲԵԿՅԱՆԻ ՀԵՂԻՆԱԿԱԾ  
«ԲԱԶՄԱԿԵՏ» ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԵՐՐՈՐԴ ԳԻՐՔԻ

Նաթելլա Լալաբեկյանի հեղինակած «Բազմակետ» Բանաստեղծութիւններու Երրորդ Գիրքի շնորհանդէսը տեղի ունեցաւ Կիրակի, Նոյեմբեր 8ի երեկոյեան Կլէնփէյլի Հանրային Գրադարանին մէջ:

Սոյն ձեռնարկին ներկայ գտնուեցան Առաջնորդ Սրբապան Հայրը, Արցախի նախկին Նախագահ՝ Մեծայարգ Տիար Արկաղի Ղուկասեան, Արտեմ Յարութիւնեան, միջազգային ճանաչում ունեցող արուեստագէտներ եւ գրողներ:

Բանաստեղծութեան գիրքը նուիրուած է Ռիմա Կապակովայի յիշատակին: Հեղինակը գիրքին սկիզբը գրած «Նամակ Հայ Ընթերցողին» մէջ կը գրէ. *«Հայաստան, Ռուսաստան, Միացեալ Նահանգներ. իմ ճակատագիրն է: Սակայն իմ պանգեպուրեան արմատներն ինձ միշտ են բերելու Հայաստան, այդ պատճառով ուզում էի, որ իմ գիրքն անպայման հնչի նաեւ հայերէն: Այս գրքի ռուսերէն բնագրի՝ Երեւանում կայացած շնորհանդէսի ժամանակ ես մի միտք յայտնեցի, որ կը կամենայի հիմա կրկնել. Թէեւ բանաստեղծութիւնը գրում եմ ռուսերէն, եւ իմ գործարար լեզուն անգլերէնն է, սակայն ծնողներիս եւ զաւակներիս հետ հայերէն եմ խօսում: Սրանով, կարծում եմ, իմ կեանքի մասին ամէն ինչ է ասուած»:*

Շնորհանդէսի աւարտին Առաջնորդարանի Գալայճեան Սրահին մէջ տեղի ունեցաւ ընդունելութիւն, որուն մասնակցեցան Մեծայարգ Տիար Արկաղի Ղուկասեան, Արտեմ Յարութիւնեան եւ մեծ թիւով գրասէր հասարակութիւն: